



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՀԱՍԿԱՔԱՂ

(Հերբումն Հորոյի Հանելուկներուն)

◁◊▷

(Շար. տես Բազմավէպ 1924 էջ 228)

« ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆՔ ԿՈՐԻՒՆԷՆ¹. — (Էջ. 148). « Ուստի և իմ մասնաւոր աշակերտութեամբ վիճակ առեալ, թէպէտ և էի կրտսերագոյն և առաւել քան զկարմեր գրաւեալ անաշառ հրամանին հասելոյ, փութանակի և առանց յապաղելոյ զառաջի եղեալն մատենագրել»։ —

Մենք ըստ մեր կարի ուղղած էինք վերոյիշեալ պարբերութեան թերի երեցած տեղերը, Հորոյ ինքն ալ փորձեր է «լաւագոյն» ուղղագրութիւն մը ընծայել, բայց կորեան ոճը չհասկանալուն համար մութի մէջ խարխափելով հանդիպածը կը բռնէ, Սոյն հատուածին մէջ կորին չուզեր ստել թէ ինքն մասնաւոր, առանձին կեր-

պով աշակերտած է Մեսրոբի, այլ աւելի խոնարհաբար կ'ուզէ ասել թէ՛ քան զինքն գիտութեամբ և տարիքով իւր վարդապետի երկու նախկին ծերունի աշակերտներն իրեն կը դիմեն՝ վարդապետի կենսագրութիւնն մատենանշան ծաղկեցուցանել. իսկ իւր անձի համար թէ ինքն ալ առանձին խնամք և գուրգուրանք վայելած է երկու լուսաւորչացն Սահակի և Մեսրոբի, յայտնի է այն բանով՝ որ թէպէտ կրտսերագոյնն էր, բայց առաքինութեամբ կատարեալ և տակաւին երիտասարդ վրահայոց եպիսկոպոս կը կարգուի և իրեն կը յանձնուի անոնց դպրութեան աշակերտութիւնն։ Զայս կամի ասել կորին գրելով. « Ուստի և իմ մասնաւոր (վրահայոց) աշակերտութեան (և եպիսկոպոսութեան) վիճակ առեալ»։ Ի հաստատութիւն բանիս, նոյն

1. « Վերջին Լուր » Թ. 3119, 24 Մայիս և շարունակութիւն,

ինքն փոքր ինչ յետոյ յայտնագոյնս կը գրէ. «Յորոց (աշակերտակիցներէն) և իմ անարժանիս եղեալ ի կարգ եպիսկոպոսութեան վիճակ» (վիճակեալ) և այլն:

Յաջորդ պարբերութիւնն էլ Չ. «Եւ արդ առեալ» մինչև էլ 6 «Նովին սովորութեամբ վարին» Ս. Մեսրոբի պատմութեան չի վերաբերիր, և յառաջ եկած է այլ ձեռագրի մը թերթերու շփոթութենէ, զոր անհասկացող մէկն անյարմար կերպով պզուցեր է ընդ մէջ նախաշախիղի և պատմութեան: Ազգաթանգեղեայ ոճով իբր մեծ գործի մը ձեռք զարնելու պատրաստութիւն տեսնելով, ճառագործն իւր ճանաչած մարդիկներու աղօթքի օգնութիւնը կը հայցէ: Ուրդարև այս պատառիկէն կ'իմացուի որ Ս. Գրոց մեկնութիւն մը եղած է, վարդապետական քարոզներ, ճառեր, որով հեղինակի բերնին յարմար կու գայ ստեղծ: «Զորս և մեր համօրէն աղաչեալ երկախառնել (երգախառնել) ընդ մեզ աղօթի» յանձնարարութեամբ աստուածն ղէն շնորհացն, զի կամակարագոյնս և ուղղագոյնս նախցեմք զհամատարած աշխօքն վարդապետական ծովան»: Վարդապետական ծովուն — Ս. Գրոց — և ոչ թէ մատենանշան ծաղկեցուցանել Մեսրոբայ վարուց պատմութիւնն, Յորմէ ի յայտ կուգայ Հորոյի անտեղի պնդումն «Երկախառնել» ի վրայ, իբր թէ կորին կարօտ լինէր իւր ընկերաց օգնութեան կամ զործակցութեանը գրելու համար իւր պատմութիւնը՝ մի քանի թուղթ:

Անցնինք Հորոյի միւս եղծագրութեանց շարքին. — (Էջ 154). «Այլ Սրբոյն Պաւլոսի չորեքտասանեցումբք թղթովք պատմեղորս առաքելաբկիցս և նիգալակիցս և ուրախակիցս իւր առնէ»:

Մենք այլէն յետոյ և մը յաւելցնելու հարկ տեսանք, իօսքի կապը կցելու նախընթացին հետ. իսկ պատմեն թողինք անխախտ, և քացաարութեան մէջ ասած ենք որ գովելու և պատուելու իմաստն ունի, ոչ թէ Հորոյի պէս քմահաճոյքով մը փոխել «պատուէ»ի, մենք համեմատած ենք

հեղինակի սյուրբ գրածներուն, զոր օրինակ էլ Յ կը գրէ. «Բայց զինչ ասիցեմք զզուգանացն (գերանելեացն) զառ ի միմանաց պատմեալ (պատմեալ) զգովութիւնս — ներբողեան ճառերը: — Եւ չուզեցինք փոխել, որովհետև հակասական բան մը չկայ, քանի որ Պողոս իսկապէս աւելի կը պատմէ իւր առաքելակիցներու և նիգալակիցներու գործերը քան թէ կը գովէ, ասելով որ գովութիւնն ինքնիւր գործէն յայտնի է: Զուզեցինք փոխել անգամ ևս, պատկառելով բնագրի հեղինակութեանն, որ փոքր ինչ ստորև կը գրէ. «Որոց զյօժարութիւն Աքայեղոց վասն պաշտաման սրբոցն ի Մակեդոնիա պատմեալ՝ նախանձեցուցեալ յորդորեաց» և այլն: Ուրեմն նաև Պողոս լաւ կերպով կրնար պատմել իւր գործակիցներու ըրածները և շարժել ի բարի նախանձ զլսողները:

Սակայն տակաւին խռոված է Հորոյ՝ ինքնիւր մէջ ուռած իբրև տիկ և պարզիւ արդեօք ինչ կը պատահի զիտէք. ի հեճուկս վիճեակի և վիճենայի Միսիթառեանց հայկաքանութեան, Հորոյ 15 դար յետոյ կ'անդադառնայ որ կորեան մէջ (էջ 5), ԱՆՈՒՆ ԲԱՅԻ մը դիմաւոր բայի հետ Սեռական հոլով դրուած է. «ԱՅԼ ՍՐԲՈՅՆ ՊՈՂՈՍԻ ... ՊԱՏՄԷ»... Մեծ է Հորոյի զարմացումն, և զայնակողութիւնն՝ Բայց Հորոյ մի տեղ Պ. Պատմանեանի վկայութեամբ բացատրեց թէ ինչպէս ձեռագիրներու մէջ կը սպրդին տարբերութիւններ և կամ պակասներ, այսինքն մէկ թելադրողի ձեռքի տակ շատ ընդօրինակողներ կամ բառեր սխալ կը լսեն կամ չհասնելով բաց կը թողնեն: Ուրեմն պէտք է մտածել թէ «այլ և սրբոյն Պողոսի» և պատմի միջև բան մը կը պակսի: Բիւզանդի ասածի պէս, Հորոյ մեր դասական մատենագիրներէն ո՛չ մի բան, և ոչ կէս բանի և ոչ ինչ չէ իմանում. մանաւանդ կորինը որ իւր համարձակ գրչով կ'ըմբոստանայ կանոնի և կապանքներու գէժ, որովհետև ժամանակի կենդանի քարբառով գրուած է: Մէկն ուղղագրութեան ձեռք զարկած ժամանակ ջանալու է բովանդակ

գրուածն մտքի առաջ ունենալ. եթէ Հո-
րոյ այսպէս բըած ըլլար, պիտի գզդշանար
իւր ամենատոճե սրբագրութենէն «Այլ և
Ս. Պօղոս... պատմէ»։ Հորոյի աչքի տակ
կը դնենք քաղուած հետեւեալ լեզուի դար-
ձուածքները սեռական հոլովով և դիմաւոր
բայով հասկանալու իր սխալը։

(Էջ 4.) Ոչ միայն սեպականացի զերկոտա-
սանիցն... այլ և գայլոց մատուցելոցն՝ գովի
և զհաւատոցն ճշմարտութիւնս — (Էջ 21.) Սկսեալ
երանելոյն Մայրոցի ճառս յաճախագոյնս...
կարգել և յօրինել — (Էջ 2.) Հանգոյն ասա-
ցելոյս (ոցս) երանելոյն Պապոսի առ Երբայեցիսն
կարգեալ գառնանս գովի գնոցին ճշմարտութիւն
հաւատոցն — (Էջ 4.) Եւ զայս օճան ընկալեալ
ի Տեառնէ հրանելի առաքելոցն, զամենայն գոր-
ծակցաց իւրեանց գրով նշանակել զքաջու-
թիւնս։

Հիմա՞ տեսնե՞ք թէ ի՞նչ բան անուշա-
դիր օրինակողը ի բաց թողեր է, զոր բնագրի
հոգին ճանաչող մը կրնայ հեշտեալ լրացնել
մտքով. զի երկու սեռականներ «Սրբոյն Պա-
ղոսի» մէկանց սխալի անկարելի է։ — (Էջ 4.)
Այլ և սրբոյն Պապոսի ընտրութեան
անուանեալ — չորեքտասանեքովք թղթովք
պատմի գիրը առաքելակցիս։ — (Էջ 4.) Այլ և
սրբոյն Պապոսի ՝ օճան ընկալեալ ի Տեառնէ
գրով նշանակել զքաջութիւնս ընտրեալս.....

Պիտի հասկանար որ մատենագրական
ոճն գեղեցիկն և ազդուն նա է որ կը
խուսափէ կրկնութիւններէ, և կ'ընէ գեղ-
չումներ ձանձրութենէ չ'ընդունելու և շա-
րադրութիւնը ծաղկեալ գործելու համար,
քանիք ընթերցողը մտքով պիտի լրացնէ
պակասը։ Այս է կորեան ոճը. կիրթ ճաշակ
և զարգացած միտք մը միայն կ'ըմբռնէ
սոյն քաղցրութիւնն, որ նա կը Սիրէ անուն
բային իրեն բացայայտիչ գործածել ան-
ցեալ դերբայով։

(Էջ 156.) «Մերկանար (Ս. Մեսրոբ)
այնուհետեւ զիշխանակիր ցանկութիւնսն»։

Նախ մտածելով որ Ս. Մեսրոբ կը լքանէ
թագաւորի արքունիքն, հրաժեշտ կու տայ
աշխարհի մեծութեանց փառքի և պատուոյ
և կ'ընտրէ ճգնաւորական խառակօն կեան-
քը, այնուհետեւ նա պիտի ապրէր «մե-
ռեալ աշխարհի և կենդանի ի Բրիստոս».
ուստի ի դէպ համարեցաք «զիշխանա-
կիր»ը փոխել «ի զաշխարհակիր ցանկու-

թիւնսն»։ Բայց այսու չէինք ժխտեր որ
Ս. Մեսրոբ եղած չըլլար իշխանական
տնէ։ Խոսքովի արքունիքի մէջ, արքունի
զպարպետ լինել, զինուորական արուես-
տին մէջ բարձր դերք զբաւելու համար,
գրեթէ անհնարին էր որ մէկն ազնուա-
տոհմ չըլլար, նկատելով նաև այն դա-
րերու ոգին, Հայ արքունիքի կազմութիւնն,
յորում մուրց ունէին նախարարագունք և
ազնուատոհմք. իսկ ռամիկն հպատակելու
և ծառայելու ստիպուած էր իրենց տէրե-
րուն։ Մենք համարած ենք (և մի ուրիշ
գրութեան մէջ փորձած ենք հաւաստել)
որ Մեսրոբ ազնուատոհմ էր և Վահու-
նեաց կարճագոյտաց ցեղէն, Ս. Սահակի
ալ ցեղակից — որով կորեան «զիշխանա-
կիր ցանկութիւնսն» այդ իմաստով կրնայ
անփոփոխ պահուիլ։

Բայց Հորոյ սրամարմնելով որ Մես-
րոբ Հացեկաց գիւղացի Վարդանի որդին
էր, ուրեմն գիւղացի էր, ոչ ճանա իշխան։

Սակայն Հորոյ, որ ինքնին այնքան «գի-
տուն» է, թող ապէ թէ Արշակունի «որ
թագաւորներ քաղաք ծնած են, չեմ ասեր
Նախարարներ։

Տիրան թագաւոր կուտ աւանդ կը բը-
նակէր որ գիւղ մ'էր, ձմերոց արքունի։
Վահան ամատունի Օշական գիւղէն էր և
թերևս մօտաւոր ազգական Մեսրոբի, որով
կը յաջողի տանել և թաղել իւր սեփա-
կանի մէջ։ Հարկւրէն աւելի Ասագ Նա-
խարարեանն իրենց գեղերու և ղեկակներու
մէջ կը բնակէին, առանց ըստ մտաց Հո-
րոյի գիւղացի լինելու։ Արշակունի թա-
գաւորք ցանկացան ազգախառնութիւն ընել
Գրիգորի տանը հետ. արդ Ս. Սահակ
(թերևս Նեբաէս և այլք) ծնած է Աշտիշատ
գիւղում, և զկնի մահուան «յետ սակաւ
ինչ աւուրց ընդ տիւ և ընդ գերբեր ի Տարօն
հասուցանէին մինչ ի ԲՈՒՆ ԻՍՍ ԳԻՒԴՆ
յԱշտիշատ. արդ ուրեմն զիպոյցի է...»

Աշտիշատ և Հացեկաց գիւղերն ըստ
նկարագրին Բիւզանդի ի մի կրնան նա-
մարուիլ, վասն զի Աշտիշատ դարեանդի
վրայ է, բարձրադայեաց, վայելչադիր,
իսկ Հացեկն անոր ծառագարդ ձորի միջէն

վազող առուակի մը ասիին շինուած: Ուստի Հայաստանի Լուսաւորիչ Ամուրն, թէ՛ գիւղացի են, և թէ՛ ամենաբարձր ազնուական ցեղէ:

Հորոյ «Ժողովուրդի Զայնը»-ի մէջ կը շարունակէ իմ «Ուղղագրութիւնը Նախնեաց»ը արդուկելու գործը. բնաւ բախտաւոր եղած չէ, վասն զի միշտ կամ ձեռքը վառեր է կամ նիւթը: Հաւաստիք ահա. «Տիրան մեռաւ ի ճանապարհի ի ձեռն հիւսիսոյ կալեալ»: (ԼՂ 268) Հորոյ կ'աւելցնէ. «Ուղղագրիչը վարանելով կ'առաջարկէ հիստոյ? մինչդեռ այդ բարձր խորհնացույ 1881 թ. տպագրութեան մէջ ուղղուած էր»: Յիրաւի վրիպեր է աչքէս: Այդ տպագրութեան սրբագրիչն եղած է Հ. Ալիշան, ուստի ինձի պատիւ կը համարիմ որ անկախ Մեծ մարդէն նոյն սխալը յաջողեր եմ ուղղել: Գարձեալ հարցականն որ հոն դրած եմ՝ ոչ թէ իմ ուղղագրութեան վրայ տարակուսած եմ. այլ որովհետեւ ուրիշ տեղ խորհնացին կը գրէ Արգարու քոյր Աւդի համար թէ՛ «Պատահէ բքոյ ի լեւինս կորդուաց, ցրուեաց զամենեւեան մորիկ (բուք ու բորան) մինչ ոչ գիտելով ընկեր զընկեր՝ ընդ որ վարեցաւ»: Ուրեմն մտածեցի որ նոյն փոքր ձանքն հանդիպած է նաև Տիրանի, որ փոխանակ ձեան հիւսոյ տակ մնալու, գուցէ հիւսիսային դառնաշունչ հողմերէն բքախեղդ եղած է, կորցնելով իւր լեկերները: մինչդեռ Սանտա երեք օր երեք գիշեր ձեան տակ կը մնայ և կ'ազատի: Հորոյ պէտք է գիտնայ որ ո՛չ Հայաստան և ոչ այլ լեռնային երկիր ձմեռոցով ձեան հիւս վար չի գար, այլ գարնան տաք եղանակն: Արդ Տիրան ձմեռ կը մեռնի, ուրեմն հաւանական է որ բքախեղդ եղած է Հոմէական լեզգիները սարսնցնող սառնաւոր թանձր ձիւներէն՝ ցրտերէն: Հորոյ պէտք է գիտնայ դարձեալ, անծանօթ լինելով Հայաստանի ծանր ձմեռներուն, որ ձիւնը որքան շատ տեղայ՝ զմարդ չի խեղդեր, այլ խեղացինը՝ երբ բուքը կը սկսի՝ կը նստին փոքր ի շատէ

պատասպարուած անկիւն մը, տեղացող ձիւն մինչև երեք մետր բարձրութեամբ տաքուկ կը պահէ իւր սպիտակ վերմակի տակ. մինչև հովը դադրի՝ կը պատռէ ձիւնն և ողջ տոռոջ դուրս կ'ելլէ: Բայց անմուտներ երբ շատ կը չարշարունին ճամբայ գտնելու, կը քրտնին, կը յոգնին և կ'ինկնան մի տեղ, քրտինքը կը պաղի և իրենք աչքերը կը փակեն այլ եւս չբանալու համար: Տիրան այս աղէտին պատահեր է անշուշտ, ապա թէ ոչ պէտք էր ձեան հիւսոյ տակ մնացած ըլլային նաև իւր ուղեկիցներէն մի քանին:

«Եւ (խորով) վանեալ սրով և գեղարդեամբ զհզօր զազգսն զայնոսիկ, մի ի հարիւրոց յամենեցունց պիտանեացն առնու պատանդս»: Մենք ուղղած էինք. պատանեացն: Հորոյ «չի կարծեր որ տեղի ըլլայ այս սրբագրութեան»: Յաղթող խոսքով պայման կը զնէ որոշ թիւով պատանդ վերցնել յաղթուողներէն, այս պայմանն է՝ ամէն մի հարիւր պատանեկներէն մէկն առնու: Բնական է որ հարիւր պատանիներու միջէն ընտրուածներն, հարկաւ ամենէն աւելի «քանի հարարներ» եղած ըլլալու են, քաջակամ և մարտիկ. մինչդեռ ըստ Հորոյի եթէ խառն ի խառն կանգնեցնէր և մին վերցնէր՝ կրնար ըլլալ որ իրեն պէս յիշիսի մ'ալ 100ի մէջը գտնուէր: Ստեփաննոս Տարօնեցի, խորհնացու հատուածն բառացի առնելով կը գրէ. «Մի ի հարիւրոց յամենեցունց ի ՊԱՏԱՆԵԱՑՆ՝ առնու պատանդս». էջ 55.

(ԼՂ 269) «Երկու ցեղք Պահլաւին՝ որ Ասպահապետն է Սուրենեանի՝ Պահլաւն անուանին». — Մենք ուղղած էինք. Ասպահապետ և Սուրենեանի Պահլաւն անուանին: Հորոյ կ'ըսէ. «Եստ իս (!) հաւանական է որ Ասպահապետն և Սուրենեան Պահլաւն անուանին»: Այս տեղ արդուկի գողորշին զարկեր է Հորոյի գլուխն, թող բանայ իրեն սիրած 1881 տպագրութիւն էջ 223 և կարդայ. «Եւ արտաքոյ ցեղից նորա (Արտաշէսի) թագա-

ւորեցելոյ, ցեղս որոշել զնոսա երիս, կոչմամբ այսպիսեաւ։ Կարենի Պահլաւ, Սուրենի Պահլաւ, և զըսոյն Ասպահապետի Պահլաւ»։ Գոնէ անդրադառնալ որ Սուրենեանի ի դարձեր է նախդիր Պահլաւին և Ասպահապետի՝ ձեռագրի ոչ փոխուած է ի հետ։

(Լէ 269) — «Տըղաստ նախ ի մանկութեանն յերկար կամակար աշտանակեալ»։ Ուղղած էինք Կումակոր, իբր կատարի, ամենի, խստերախ։ որով մեծ քաջութիւն, սրտոտութիւն էր մանկան մը համար (12 — 14 տարեկան) հենալ իւրաքանչեւ ձի մը և կորովի ձիավարել, նուաճել իւր բոի մէջ։

Խորհմացին ասէ ի մանկութեանն ոչ պատանի, ոչ երիտասարդ, և ոչ տղայ, այլ մինչև 14 տարեկան, ասով կարծես ուզած է համեմատութեան ղենի զՏըղաստ Մեծին Աղեքսանդրի հետ, որ 12 տարեկան աներկրկը կը թռչի հօրը կատարի և անսանձ ցլազուլու ձիու նիւրը և կորովի ձիավարել, սքանչացուց հայրը և ականատեսները։ Հորոյին կը պակսին այսպիսի պատմական տեսութիւններ։ Ուստի մեր հասցէին կը գրէ. «Նոյն երեսին մէջ սակայն աւելի աչքառու և ուղիղ դատողութեան գլխովին հոկաասկ սխալ մը կայ»։ (ընդգծ. մերն է)։ Այս տեղ դարձեալ ինքնիրեն կ'աւելցո՞ծի և կը շարունակէ. «մինչ մեր վննետիկեան երկուքին պարսաւագիրը (?) զիս ածականը գոյականէն որոշելու անկարող կը հուշակեն, (իւրաւապէս) Հ. Գ. Նահապետեան շարագոյն քան զիս սխալելը է վասն զի Տըղաստայ հեծած սխալ ածական համարելով կումակար (հուր) բառը և անտրամաբանական նկատելով այդ՝ կումակորի (խեղ) կը փոխակերպէ։ կումակար ոչ թէ ածական այլ մակարայ է հոն, և կը վերաբերի ոչ թէ ձիուն, այլ անոր վրայ հեծողին. — կը նշանակէ մեծաւ յօժարութեամբ, փափաքով (Տըղաստ կը հեծնէր ձին) հետևարար սըրբագորութեան բնաւ տեղի չկայ»։ Զգիտեմ թէ թերսիզէս ինչ «աւելի աչքառու և

ուղիղ տրամաբանութեան հակառակ սխալ բաներ կընար ըսել, քան ամառեօ ղենադատի մեզի հրամուշցածները։

Ողբում զքեզ Հորոյ, երկիցս և երկցս և աւելի. Նախ որ մեր նախնաց բնագիրները չեն հասկանար. ք ածականը գոյականէն, մակարայ ածականէն զանազանել չգիտես. գ մեր ուղղագրութեան միտքը չեն հասկացած, և աւելին՝ մինչև ցայս վայր գրածներդ «ուղիղ դատողութեան գլխովին հակառակ բաներ են»։ Ուստի ներէ որ ի վիճակի չենք զքեզ հասկանալու։

Կումակարը ճիշդ որ ամական է և ձիուն կը վերաբերի և ոչ հեծնող Տըղաստին. վասն զի մակարայ ենթադրողներուն (և Հորոյն պիտի լինէր առաջինը) գրած ենք նահատութիւն մը չէ — «մեծաւ յօժարութեամբ, փափաքով» ըստ Հորոյի, ձի հեծնալը որ ամէն տղու փափաքն է և քաջութիւն մը չէ. բայց հեծնալ կումակար, կատարի ձի մը՝ միայն վերապահուած է Տըղաստին, որ մանուկ տակաւին, գիտէ ԿՈՐՈՎԻ ԶԻՆԱՎԵՆ և նուաճել զամենին։ Ի դէպ կը հանդիպինք «փողով. Չայնը» թ. 1760, յորում Արեւիսդէտ ստորագրութեամբ մէկն, կը հաստատէ մեր ասածը թէ կումակար ածական է. ըստ Նոր Պարսկերէնի «քեամքեատ» յՃԸ որ կը նշանակէ «իւր կամքը ընող, յամառ» — և մեկնած կը համարի հայերէն կումակարն։ Սակայն անհիմն է մեկնութիւնն. վասն զի հայերէն դասական մատենագիրներուն մօտ կումակարը (զուցէ և հին պարսկերէնի մէջ) ճիշդ որ յամառի հակառակ նշանակութիւն ունի, և երբ հանդիպինք կումակար մտքով, կամքով, այն կը նշանակէ հաստատատուն սիրով և յօժարութեամբ։ Արեւելագիտի ճիտն ալ ծուռ չթողնելու համար, թոյլ կու տանք աւելցնել, որ նոր պարսկերէնի թաթարական ծամածուռ հընչուած բառն կընայ աւելի համապատասխան լինել կումակորին՝ ծամածուռ, որ է «իւր կամքին վրայ անխմաստ կերպով կեցողն, յամառ, ծուռակած»։ Ուստի Հորոյ կամ կումակարութեամբ պէտք է ընդունի

մեր ուղղագրութիւնը, կամ քեանքուտու-
թիւն ընկելով մնայ իր սխալի վրայ:

(Էջ 270) «Ուր նենգ գործեալ լերինն
այնիկէ բնակչաց... (Վրթանէս).... տեղը-
տիտ անցեալ գնայր յեկեղեաց գաւառ ի
թիւն աւան»: Մենք ուղղած էինք տեղը-
նաւ. Հորոյ կը փոխէ տեղանոց, և անի-
մաստ րաներ մը կ'աւելցնէ:

Հէգ Հորոյ, բնագիւղը չէ բմբռնած:
Խորենացի կը գրէ որ Աշտիշատի քուր-
մերու ջուրին թակարդ լարեր է, դարան
գործեր է սպաննելու զՎրթանէս, որ ան-
կասկած ուղեորած ժամանակ անոր մէջ
կը բռնուի. բայց աստուածային հրաշքով
կալեւկապ կ'ըլլան նենգ գործողներն,
և Վրթանէս որ արդէն վտանգի մէջ ին-
կած է, արդեօք ԱնվնԱՄ անցեալ պիտի
գնայ թէ... տեղեւոր:

(Էջ 273, 274 կթ. Հ. ՀԱ) Ի սկիզբն
յօդուածիս ասացի, որ 1881 տիպն վրի-
պեր է աչքիցս, անոր համար որ Հ. Ա-
լիշան սովորութիւն չունէր ծանօթու-
թիւններ դնել իւր գրքերու մէջ, բայց ի
կարևորագոյններէ և աւելի օտարներէ օգ-
տուածներուն, ուստի տպագրութիւնն ձեռ-
քէս անցած ժամանակ, չնկատելով ոչ մի
ծանօթութիւն և գիրքն այնչափ յայտնի,
ախորժ չկար դարձան կարգալու. Հորոյ իր
սրտի փուռն կը թափէ գինքը տգիտո-
րեան և մոլորութեան մեղադրողներուն և
իմ դէմ, իրեւ թէ իմ ուղղագրութիւններն
հակասած ըլլային Հ. Ալիշանի ուղղա-
գրածներուն, բայց քանի որ ճշգրտութեամբ
և նոյնութեամբ չեն տարբերիր իրարուց,
եթէ Հորոյ բարի ըլլար, պէտք էր ուրա-

խութիւն յայտնէր: Հորոյի զայրոյթն խել-
քը զլիւն այնքան կը տանի, որ կը մոռնայ
թէ խօսքը Խորենացու վրայ է, յանկարծ
կը փոխէ Եղիշէին և կ'ըսէ. «Մինչ դեռ այս
վերջինը (մենք) իր վանքին մէջ ձեռքի
տակ ունեցած եղիշէին արդէն ի վաղուց
կրած սրբազրութիւնը բնաւ չյիշելով հան-
դերձ, անոր չսրբազրուած մասն ալ ինծի
թողեր է որ ուղղեմ»¹: Վերջին բառերս
Հոռմայեցի Մումիիս զօրավարի քթի
շունչն է, որ նաւապետին յանձնելով կո-
րնթոսէն յափշտակած յունական ա-
րուեստի գլուխ գործոց արձանները Հոռմ
տանելու, զգուշութեան սպառնալիքի մե-
ծագոյնն կ'ըլլայ ի պատիժ խեղճ մարդուն
կոտորածները իրեն շինել տալու:

Նոյնպէս Հորոյի մտայնութիւնն ինքն
գինքն ձեռնհաս կը հրատարակէ ուղղիւ
(իմա ապականելու) մեր նախնեաց գեղեց-
կագոյն արձանները Եղիշէ, Եղնիկ, Ագա-
թանգեղոս և այլն. և ոչ իսկ Մումիիսի
մը գեղեցկութեան մասին ունեցած հաս-
կացողութեան չափով: Ինչ կարելի է
սպասել այն մարդուց որ հայկական գե-
ղեցիկ դպրութեան անտեղեակ, ազէտ
հայ ոճին, հայ գուրցուածքին, հայ մուս-
նութեան, զորս ՀՄՏԱԳՈՅՔ դարերու ամ-
բարած գանձարանէն աշխատասիրութեամբ
կը հաւաքեն և, կ'իւրացնեն հասկանալու
և հասկացնելու համար: Իսկ Հորոյ որ
հազիւ սիրող մը (dilettante) կրնայ բնուի
ինքզինքն կարող կը զգայ առհմանական
փոխելու տեղատարի: «Եւ առաջի դրաց
այրին»² սեպ էր ուղղորդ միապաղաղ, և
ի վերուստ պաղանձաւ քուտուր, և Հայր
(հայր)³ յանդունդ խորածորոյն, և (որ)
ինչ գերծանի, յանհնարին ուղիս սաստ-

1. Ինչու չէ. այսպէս ուղղեր ես (էջ 111. 15) Փար-
պետ «ճշգրտէն», ի (փերե)փերեին, բանադրութեամբ,
կարգալ նոյն ուղղագրութեանց էջ 332, զոր ունիս աչ-
քից տակ:

Փերեվեթէն, բարձր Հորոյ չէ հասկացած: Այս բառի
իմաստն ճշգրտելու համար, II. Սահակի Կանոններու միջին
կը դնեմ մի օրինակ. Յորժամ (Երպիկոպոսն) աւելի
զգետուր գինքն պէնիչէ և փերեթերթիթէ... փափկու-

թեան պարապելով, — Կրնա՞յ յարմարիլ ուրացողի մը՝
որ սարերու մէջ աւազակներու հետ կը բնակի և կ'ապրի
կամ մօտալով կամ զոդութեամբ:

2. Լաւագոյն թուի պատմողի կողմէն սակ և հաշի-
որովհետեւ շատ հաւանական է որ ապագրի «Հայր քն»
նախնական ձեռագրի մէջ եղած լինի Հայր, քանզի դիւրաւ
կրնայ շփոթուիլ և ընդ քան վարձ ընդօրինակողին աչքէն,
ինչպէս նաև Հորոյի մօրէն:

կութեան (թեմաբ) անկուհի» . այսինքն խորանդուներին վրայ նայող ժայռերէն եթէ պարեմի մը փրթի, ահանատեան չի կրնար ըսել ինկա կամ կ'իկնայ, այլ անկատարով միայն կ'իկնար, կը գորտկէր :

Անկատար դէմքը սիրելի թուի Հորոյի, անոր համար իւր զրաժները բոլոր անկատար են :

Հ. Գ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ՁԵՌԱԳԻՐՔ

Ս. ՂԱԶԱՐՈՒՈՒ ՎԱՆՔԻՆ

(Շար. տես Բազմավէպ, 1924 էջ 232)

ԺԵ.

Դ Ե Ղ Ո Ր Ա Յ Ք

Փորըրիկ հատոր մ'է այս ալ, 16 հարիւրորդամեղը մեծութեամբ, 10 հարիւրորդամեղը լայնութեամբ, և հազիւ 2 հարիւրորդամեղը թանձրութեամբ, և կը կրէ 891 թուահամարը :

Կաշէկազմ է և լա պահուած, թուղթը պարզ բամբակեայ. ունի 84 թերթ և 168 էջ զրութիւն, որ շեղագիր է և միէջեան :

Ձի գիտցուիթ թէ երբ և ո՞ւր զրուած է այն. յայտնի է սակայն՝ որ թարգմանութիւն մ'է, ինչպէս կ'իմացուի վերնագրէն՝ որ կ'ըսէ .

Դեղորայք գրութեան պատրաստելոյ ի տիկնոջ փոփեր կոչեցելոյ, վասն թշկրոյ սակաւ ծախիւք զամենայն ախտս միեւեռ այսօր անթշկելիք հումայեղալ :

Այլեւայլ ղեղազիրներու հաւաքածոյ մ'է, աւելի վէրքերու յատուկ, ինչպէս Յառաջարանութիւնն ալ կը մատնանշէ այս կէտը, և կը տեղեկացնէ թէ ամբողջ գործը պիտի բաղկանայ երկու Հատորէ, և թէ ասի առաջինն է նորիւրուած միայն և միայն արտաքին տեսանելի հիւանդութիւններու :

*

Դրբոյկին Հեղինակունին կամ լաւ ես՝ խմբագրունին Տիկին փուկէթ բժիշկ մը չէ . իւր հաւաքածոյն անշուշտ բրած է իր ատենի բժիշկներու հետեղութեամբ, ինչպէս յայտնի է դասաւորուած սպեղանիներէն ու դեղերէն և ասոնց չափերէն, որոնք անցեալ դարու մէջ երեցած ֆրանսերէն կամ իտալերէն Դեղագոյցներու (Pharmacopée) պարունակածներէն բնաւ չեն տարբերիր :

Թարգմանիչը՝ որուն անունը զժրախտաբար չէ յայտնի՝ ջանացած է որ ղեղեղատոմաները հայացնէ՝ կարեկիւթեան սահմանին մէջ, և այս իսկ ահա կու տայ իրեն մասնաւոր արժանիք մը, ուրկէ մեղուելով կրնանք մենք ալ թղթատել զայն, եթէ երբեք օր մը հայերէն ղեղատոմանը շարագրելու փափաք ունենանք :

Այս աշխատութեան երկրորդ հատորը չկայ սակայն, կամ Հեղինակունին զայն չէ պատրաստած, կամ թարգմանիչը ժամանակ չէ ունեցած թարգմանելու և կամ թարգմանած է ու կը գտնուի այլուր :

Ամէն պարագայի մէջ, ինձ այնպէս կը թուի, որ այս աշխատութեան խմբագրութիւնը հազիւ դարուկիսեան հետեթիւն ունի, և թարգմանութիւնն ալ հաւանաբար տեղի ունեցած է անցեալ դարուն :

Լեզուն կոկիկ զբաբար է, թէև տեղ տեղ ուսմիկութենով խառն :

ԺԸ.

ԲԺՇԿԱՐԱՆ ՊՈՆՏՈՍԱՑԻ ՍԱՀԱԿ ԲԺՇԿԻՆ

Ստուար հատոր մ'է ձեռագիրս, զոր նախանցեալ դարու մէջ՝ 1759ին գրի առած է՝ ՊՈՆՏՈՍԱՑԻ ՍԱՀԱԿ անուն բժիշկը, որ ապրած է ի ֆաթոյ և ապա յէդդոկիս, ինչպէս կ'իմանանք իւր ձեռագիր Յիշատակարաններէն :

Հաստ կողքերով կաշէկազմ, լաւ պահուած հատոր մ'է, և կը կրէ՝ 1353 թուահամարը :